

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՎԱԳՅԱՆ

ՄՏԱԿՈՒՎ

(Պայքար, պայքար...)

Խիղճս ինձ հետ հաշտ չէր: Ի՞նչ անեի կամ ասեի՝ մի ծուռ բան գտնում էր ու հոգիս ուտում: Իսկ գլխավոր մեղադրանքը ո՞րն էր, գիտե՞ք.

– Դու աշխարհում, քո շուրջը, հենց քո մեջ եղած չարի, վատի դեմ չես կռվում, դրանք տեսնում, հասկանում ես, բայց հանդուրժում ես, լռում...

Ճիշտը՝ ճիշտ էր: Բայց անհրաժեշտ չէր ուզում դրուստանա մեջ մտնել ու իմ բացատրությունները լսել. ավար ես հո՞ չեմ կարող այս մեղավոր աշխարհում հրեշտակի վարք ու պահվածք ունենալ և կամ Դոն Քիշոտի պես սուր ճոճել այն ու ձախ: Ոչ միամիտ եմ, ոչ էլ խելքից պակաս, որ մարդկանց իմ դեմ հանեմ, վրաս ծիծաղեցնել տամ...

Բայց այս բոլորը հո խղճիս ասած, հո քանուն տված՝ շարունակում էր բվվալ ականջիս.

– Մեղավոր ես... Հանցավոր ես... Վախկոտ ես...

Տեր Աստված, ի՞նչ է լինելու սրա վերջը, ավար այսպես շարունակվել չի կարող: Հարկավոր է, ինչ կերպ ուզում է լինի, ազատվել այս անխիղճ խղճի ճիրաններից: Բայց ինչպե՞ս, ինչպե՞ս...

Երբ արդեն գլուխս կորցրել էի ու քիչ էր մնում դառնայի անգութ խղճիս գերին, գտնվեց ելքը՝ մի հրաշք միջոց, որի շնորհիվ խղճիս հետ կարծես թե լեզու գտա:

... Կիրակի օրը կինս ինձ ուղարկել էր բակում նավթի հերթ կանգնելու: Մի քանի ժամվա ընթացքում այնքան այլանդակ բաներ տեսա, լսեցի, որ երբ, վերջապես, հերթն ինձ հասավ ու չափողը «ավտոմատը» 20-ի փոխարեն 17 լիտրի վրա կանգնեցրեց, այլևս չկարողացա ինձ զսպել. մեջս կուտակված ողջ զայրույթը դուրս հորդեց.

– Խարդախներ, սրիկաներ, ձրիակերներ, անխիղճներ, հիմա էլ օտարների օգնությունն եք թալանում, մեր ազգի անու՞նը աշխարհով մեկ խայտառակում...

Եվ չգիտեմ էլի ինչեր կասեի, եթե դրկիցս՝ զուսպ ու քչախոս մի մարդ, թևս չբռներ ու ինձ մի կողմ չտաներ:

– Նյարդերդ, սիրտդ խնայիր, հարևան, էդպես չի կարելի...

– Իսկ ի՞նչ է, դրանց կեղտոտ արարքները տեսնեմ ու լռե՞մ, հանդուրժե՞մ...

Բա խղճի՞ս ինչ պատասխան տամ, հոգիս հանում է...

– Ո՞վ ասաց՝ լռիր ու հանդուրժիր: Ընդհակառակը, ընդդիմացիր, պայքարիր, կռվիր... Ու խղճիդ պատասխանն էլ տուր՝ այնպես, որ գոհ մնա...

– Ինչպե՞ս: Դա իմ գաղտնիքն է, բայց քեզ կասեն:

– Այդ ինչպե՞ս, է...
Ու բացեց իր գաղտնիքը:

– Ես լիովին, անխաթար կատարում եմ խղճիս բոլոր պահանջները, թելադրումները... մտքումս, իմ մեջ...

– Քո մե՞ջ, քո մտքու՞մ, – շվարեցի ես: – Եվ դա որևէ արդյունք տալի՞ս է:

– Արդյունքները ուղղակի ապշեցուցիչ են: Փորձիր՝ կհամոզվես...

Ուրիշ ճար չունենալով, որոշեցի փորձել այդ հեշտ միջոցը.

...Հիմնարկ մտնելուն պես, ինձ ասացին, որ տնօրենը վաղուց ինձ է սպասում և շատ զայրացած է: Իսկույն մտա մոտը.

– Բարի լույս, պարոն Թորոսյան:

– Լույս քեզ տեսնողին, – բարևիս չոր պատասխանեց նա: – Լսված բա՞ն է, որ տեղակալը պետից ուշ գա գործի: Թե՞ աթոռիս վրա աչք ունես...

– Չե՛, ի՞նչ եք ասում, մտքովս էլ չի անցնում...

– Հա՞, էսօրվա ժողովում դա կերևա: Ելույթ ես ունենալու, գնա պատրաստվիր:

Գնացի, նստեցի տեղս: Ուրեմն ելույթ եմ ունենալու... Շա՛տ լավ: Տես, թե ոնց եմ պորտդ տեղը դնում...

...Ժողովում իմ ելույթն օրինակելի էր.

– Մեր նորանկախ պետության կայացման այս անցումային դժվարին պայմաններում կոլեկտիվը, պարոն Թորոսյանի հմուտ ղեկավարությամբ, պատվով է կատարում իր առջև դրված բոլոր խնդիրները, որոնցով դրանց լուծման ոչ ստանդարտ եղանակներ... Բայց այսօր մեզնից պահանջվում է ավելին... Մենք պարտավոր ենք ի հայտ բերել կոլեկտիվի ողջ ներուժը, առկա և թաքնված բոլոր հնարավորությունները... Մենք պետք է ազատվենք տոտալիտար ռեժիմից իներցիայով մեզ հասած որոշ, բարեբախտաբար, հաղթահարելի թերություններից...

Օրինակ, չնայած պարոն Թորոսյանի պահանջկոտությանը և զգուշացումներին, որոշ աշխատողներ, որոնց թվում և ես, երբեմն ուշացումով ենք ներկայանում գործի... Անձամբ ես խոստանում եմ կարճ միջոցում հաղթահարել իմ այդ սովորույթը...

Ելույթս դուր եկավ բոլոր ներկաներին, հատկապես՝ պետիս, որը, թերթից մի պահ կտրվելով, նույնիսկ միացավ ծափերին... Խեղճ մարդ: Ի՞նչ իմանար, թե մտքունս ինչ եմ ասում...

– Այ ընկերներ, ես ինչո՞վ եք զբաղված, ի՞նչ եք անում... Ե՞րբ պիտի վերջ տանք այս խեղկատակությանը: Ախր, եթե առաջ մենք ձևացնում էինք, թե աշխատում ենք, իսկ պետությունը՝ թե աշխատավարձ է տալիս, ապա հիմա, չնչին բան ենք ստանում, բայց անգամ չենք էլ ձևացնում, թե աշխատում ենք... Ամբողջ օրը սուրճ ենք խմում, բամբասում, զազրախոսում, խաչբառ լուծում, հեռախոսով զրուցում... Իսկ մեր տնօրեն կոչվածը՝ ծանծաղ, փուչ, անկիրթ ու ամբարտավան մի չինովնիկ, աչքակապությունից բացի ուրիշ զբաղմունք չունի... Անո՞թ է, եկեք վերջ տանք այս թատրոնին...

Մտքունս այս բոլորն ասացի, սիրտս թեթևացրի ու գնացի նստեցի տեղս: Սպասում եմ տեսնեմ խի՞ղճս ինչ կասի... Նա լռել է, ձայն չի հանում, երևում է՝ շփոթվել է իմ անսպասելի «ներխոսությունից»: Բայց քիչ անց լսում եմ նրա ձայնը.

– Վատ չսկսեցիր, ապրես, բայց կարևոր է, թե ինչպե՛ս ես շարունակելու...

– Ինչպե՞ս: Սկսել եմ, կգնամ մինչև վերջ: Ու թող կորչեն ամեն վախ, կասկած, երկմտանք, ամեն հաշիվ ու հաշվենկատություն, նաև ամեն զգուշություն, չափի զգացում, քաղաքավարություն ու տակտ, որ կաշկանդում է մարդուս, խոչընդոտում հոգու և մտքի ազատ սլացքը դեպի ճշմարտություն ու արդարություն... Ի դեպ, դրանցից ազատվելով, ես բնավ չեմ երկյուղի, թե իմ վարմունքը, արածներս ու ասածներս կմնան մարդկանց հիշողության մեջ և իմ երեսով կտրվեն, երբ ես, նույն համոզվածությամբ ու կրքով սկսեմ ուրիշ բաներ ասել ու անել... (Քանի՞-քանի՞ երևելի մարդիկ են չարաչար տուժել իրենց այդ անհեռատես «բացխոսության» երեսից.): Այո, ուզածս կանեմ, կասեմ, և ո՛չ մի պատասխանատվություն...

Ստանալով խղճիս «դաբրոն», ես որոշեցի ընդլայնել իմ մտակառվի ասպարեզն ու ոլորտները:

...Տան ճանապարհին տեսնեմ ժողովուրդը լցվել է հրապարակը: Հերթական հանրահավաքի են եկել բանող ու անբան, կիրթ ու անկիրթ, ունևոր ու չունևոր, և ամբոխ դարձած՝ աղմկում են, գոռու՛մ, պահանջու՛մ.

– Ազատություն... Անկախություն... Ժողովրդավարություն...

– Շատ լավ, – ասում եմ ես իմ անխոս ելույթում: Բայց դուք պատկերացնու՞մ եք, թե ինչ բան են դրանք, պատրա՞ստ եք դրանց: Եվ կարո՞ղ եք, ասենք, ազատվել հենց ձեզանից՝ ձեր նախապաշարուններից, գեշ սովորույթներից, ինքնագոհությունից, շահամոլությունից, բռնությունից, անչափությունից... Եվ կամ՝ անկախանալով, հույս չդնել այլոց օգնության, ողորմության վրա:

Կամ հենց ժողովրդավարություն պահանջելով, կկարողանա՞ք ենթարկվել նույն այդ ժողովրդավարության պահանջներին ու կանոններին, դրանք չչփոթել ամենաթողության, սանձարձակության, կամայականության ու անպատժելիության հետ...

Վախենում եմ, որ չկարողանաք: Ինձ ավելի հավանական է թվում, որ ձեզնից շատերը ետ կկանգնեն իրենց ոգևորած այդ սուրբ գաղափարներից, հենց որ տեսնեն, որ երկու էրնեկ միասին չի լինում, որ իրենք պետք է վճարեն դրանց շատ բարձր գինը՝ կրեն ամեն տեսակ զրկանքներ, նեղություններ ու պակասներ, կանգնեն ահավոր վտանգների առաջ...

Խիղճս շարունակում է լռել: Ուրեմն համաձայն է ասածներիս: Եվ ինչու՞ պիտի առարկի: Մանավանդ որ արդեն տեսնում է, թե ինչպես է «ետդարձի» տրամադրությունն ավելի ու ավելի մեծ թվով «հեղափոխականների» համակում (հատկապես նրանց, ովքեր ամենից բարձր էին գոռում...):

– Ի՞նչ ազատություն, ի՞նչ անկախություն, ի՞նչ ժողովրդավարություն, երբ քաղցած ենք, անգործ, անլույս...

– Ինչպիսի՞ փոքրոգություն, – ասում եմ մտքումս, – ուրեմն, այդ է ձեր «պայքար, պայքարի» վերջը...

– Բայց այստեղ խիղճս հանդիմանում է ինձ.

– Լսիր, չափը չանցնես, մարդկանց դրության մեջ մտիր: Նկատի ունեցիր, որ ոչ մի նվիրական գաղափար փոր չի կշտացնում, և մտքի, հոգու ու ստամոքսի հավերժական վեճում, իբրև կանոն, հաղթում է վերջինը...

– Ուրեմն ի՞նչ, – առարկում եմ ես, – ավելո՞րդ է այն ամբողջը, մենք զուր տե՞ղը եփեցինք այս ապուրը:

– Չէ, ես դա չեմ ասում, բայց չի կարելի միայն այդ մարդկանց մեղադրել, հազար ու մի հանգամանք կա, որ խանգարում են խոսքից մինչև գործի անցնել առանց խաթարումների, կորուստների, հիասթափությունների... Ինքդ, եթե կարող ես, գործո՞վ հաստատիր քո արդարամտությունը:

– Գործո՞վ: Խնդրեմ...

...Նստում եմ տրոլեյբուս: Ասենք, ի՞նչ նստել, կանգնելու տեղ էլ հազիվ եմ գտնում: Հարբած խուլիգանի մեկը, ոտքերս տրորելով, հրմշտելով խցկվում է առաջ և մի տարեց մարդու վեր կացնելով, նստում է նրա տեղը: Ոչ ոք ծպտում չի հանում: Մտածում եմ՝ սրա հետ ինչպե՞ս վարվել... Իսկ նա լկտիաբար դիմում է ինձ.

– Հը՞, ի՞նչ ես աչքերդ չռել, դունդուկ, դուրդ չեկա՞...

Ու մի փողոցային հայիոյանք էլ հավելում է դրան: Այլևս չեն համբերում (մտքունմ...), հարձակվում են վրան, վզից բռնում, կիսախեղդ են անում, հետո, մազերից բռնած, գլուխը խփում են նստարանի երկաթին, արյունվա անում... Չգիտեն էլ ինչ կանեի այդ ավագակին, եթե մեկը ետ չպահեր ինձ.

– Լավ, հերիք է, հո չե՞ս սպանելու...

Խիղճս էր: Նրան լսում եմ, ետ քաշվում: Բայց այ, այդ ամենին ականատես և ունկնդիր մարդկանց ասում եմ՝ ինչ-որ պետք է.

– Է՛ս եք, է, անտարբեր, վախկոտ, անկարեկից... Թողնեն միայն դժգոհեք, բողոքեք, ոչ մեկին չհավանեք... Իսկ որ աչքներիդ առաջ ամենազգվելի բաներն անեն՝ «չեք տեսնի», մատ-մատի չե՛ք խփի...

Բայց արի ու տես, որ այդ խուլիզանը, ասես կռահելով, թե ես մտքունմ ինչեր եմ անում ու խոսում, հանկարծ վեր է կենում տեղից ու սկսում հարվածներ տեղալ դեմքիս, մարմնիս... Վերջում էլ թքում է երեսիս ու քրքջալով, ծանակելով իջնում է տրոլեյբուսից...

...Տանը կինս խառնվում է իրար.

– Այ մարդ, էս ի՞նչ օրի ես, ի՞նչ է պատահել...

Պատմում եմ եղելությունը, իհարկե, չմոռանալով ասել թե ի՞նչ օրն եմ զգել խուլիզան շան որդուն:

– Դու կռիվ անողը չես, ճիշտ չես ասում... Վե՛ր, վե՛ր գնանք հիվանդանոց...

– Նա երևի արդեն բոքսում պառկած է... Կամ ապրի, կամ չապրի...

– Մի՛ հնարի, – սաստում է կինս ու ինձ տանում հիվանդանոց:

Բժիշկները մեզ տեսնելով՝ անթաքույց ուրախանում են, իրար անցնում, ամեն մեկն իր կողմն է ձգում... Պարզվում է, որ բոլորի «հիվանդն» եմ. մի կողս ճաք է տվել, մարմնիս վրա տրորված մասեր կան, գուցե ուղեղի ցնցում էլ ստացած լինեմ... Իսկ ճնշունս տատանվում է, ստամոքսիս թթվությունն է բարձր, հարկավոր է զննել կույրաղիքս, լյարդս... Եվ, իհարկե, ամեն մեկը՝ հատուկ վճարով... Մի ամիս պահում են ու բուժում: Վա՛յ էն բուժելուն... Դռնապանից, քույրերից, բժիշկներից մինչև գլխավորը, ինչ խոսք, պահանջում, ստանում են իրենց հասանելիքը և հնարավորին չափ ձգում «ամբուլատոր» բուժումը, մեծահոգաբար խոստանալով, որ տանն էլ կգան կիստևեն՝ «ամենացածր վճարով»... Փոխարենը ես նրանց հերն անիծում եմ իմ ձևով, դաժանորեն: Գլխավորին գլխիվայր կախում եմ հիվանդանոցի բակի կիսաչոր ծառից, մյուսներին դուրս եմ անում բուժարանից ու զրկում բժշկությամբ զբաղվելու իրավունքից: Ու դեռ ի՞նչ ծանր խոսքեր եմ ասում... Որ լսեին՝ իրենք էլ կկախվեին գլխավորի կողքին...

Վերջապես վերադառնում եմ տուն: Կնոջս պատմում եմ արածներիս ու ասածներիս մասին:

Իսկ նա թե.

– Բավական է հորինես, Աստու՛ց վախեցիր... Նա ամեն ինչ տեսնում ու լսում է...

– Հա՛: Այդ դեպքում ինչու՞ է հանդուրժում այսքան անիրավությունները, խարդախությունները, հանցագործությունները...

– Նա հանդուրժում է, դու մի՛ հանդուրժի... Մեկին մի բառ ասացի՞ր...

– Այ կնիկ, ուզում ես ինձ «սխալ» սրսկում անեին, հաշմանդամ դառնայի: Չէ, արածս հերիք էր, թող հիմի իրենք վայելեն «բուժման» բարիքները... Իսկ գալով Աստու՛ց վախենալուն, քեզ պետք է ասեն, որ ես այնքան էլ վստահ չեմ, թե... (այստեղ ես լռում եմ ու մնացածը ասում մտքումս...) նա ամեն ինչ ճիշտ է արել... Այո՛, այո՛, երևում է՝ Տերն էլ անսխալական չէ: Դե, թող ինձ որևէ մեկը բացատրի՝ նա ե՛րբ և ինչու՛ է Սատանային ստեղծել ու դրել մարդու կողքին, նրա մեջ: Եվ կամ. ինչպե՞ս հասկանալ «Առանց Տիրոջ կամքի ոչ մի տերև չի շարժվում» արտահայտությունը: Եթե իրոք այդպես է, ուրեմն աշխարհում կատարվող բոլոր ահավոր բաները՝ չար ու բարի, մեծ ու փոքր, անմեղ ու մեղավոր չճանաչող աղետները (ավերիչ երկրաշարժեր, փոթորիկներ, հեղեղներ) ու նաև ամեն տեսակ չարագործությունները նույնպե՞ս նրա գիտությամբ ու թողտվությամբ, նրա կամքով են տեղի ունենում... Ասում եմ մտքումս, համենայնդեպս, խաչակնքում երեսս, իսկ կինս հարցնում է.

– Էդ ի՞նչ ես մրթմրթում...

– Հեջ, մտածում եմ... մի բան հիշեցի...

– Դու ավելի լավ է, հիշես, թե մերոնց արդեն ինչքան ես պարտք և մտածես վերադարձնելու մասին:

Ես, իհարկե, նրան ինչպես պետք է պատասխանում եմ.

– Էդ ձերո՛նք թող հիշեն, թես ես ինչե՛ր եմ արել իրենց համար... Ինչքան եմ սրան-նրան դիմել, խնդրել, միջնորդել, գործի դրել, ընդունել տվել...

Եթե կինս դա լսեր, հաստատ մեծ կռիվ էր բացելու, բայց չլսելով գոհանում է երկինաստ մի հարցով.

– Այ մարդ, ճիշտն ասա, այդ ուղեղի ցնցումը հետևանքներ չի՞ ունեցել...

– Խելագարը դու ես, – բղավում եմ մտքումս, իսկ բարձրաձայն հավաստիացնում, որ դա բժիշկների հորինածն էր, իմ խելքն իր տեղում է...

Հիվանդանոցում «բուժվելուց» հետո, միտքս հաստատ սկսեց աշխատել և ինձ մի խելոք խորհուրդ տվեց.

– Ի՞նչ գործ ունես վտանգավոր բաների հետ, աշխարհում այնքան հրաշալիքներ ու բարիքներ կան, օգտվիր, վայելիր՝ առանց տհաճ միջադեպի ու ընդհարումների...

Եվ անսալով նրան, ես սկսեցի մտքով ճախրել երկրից երկիր, օվկիանոսից օվկիանոս... Տեսնել, վայելել աշխարհի բոլոր հրաշալիքները, ճաշակել ամենահամեղ խորտիկները, ընպել ամենաթանկարժեք աստվածային խմիչքները, մտերմանալ ամենաերևելի անձանց, բոլոր լսած-չլսած «աստղերի», գեղեցկուհիների հետ... Իմ շռայլ բարեգործություններով հռչակվում եմ բովանդակ աշխարհում, երկրագնդի տարբեր ծագերում կանգնեցնում եմ իմ արձանները, իմ անունով եմ կոչում քաղաքներ, փողոցներ, հրապարակներ...

Չգիտեմ՝ որքա՞ն կշարունակվեր իմ այս անչափ երջանկությունը, եթե խիղճս չկանգներ, թե.

- Բավական է ինքնախաբեությամբ զբաղվես, ուշքի՛ եկ...
- Բայց ի՞նչ վնաս դրանից, – առարկեցի ես, – որևէ մեկը բողոքու՞մ է...
- Ե՛ս եմ բողոքում: Դու անխիղճ բան ես անում...
- Այդ ինչպե՞ս, – շվարեցի ես:

Եվ խիղճս բացատրեց.

- Չվաստակած բարիքն աշխարհում ամենամեծ չարիքն է...
- Բայց ես...
- Այո՛, այո՛, գիտեմ, – ընդհատեց ինձ խիղճս, – դու որևէ մեկից որևէ բան չես խլում, բայց խլում ես քեզնի՛ց... քո մարդկային պարտքը...
- Լավ, էլ ի՞նչ անեմ, ինչպե՞ս վարվեմ, որ դու հաշտ լինես ինձ հետ:
- Ապրի՛ր՝ ինչպես բոլորը, արա՛ ինչ-որ պիտի անես ու թող լինի՝ ինչ-որ լինելու է...

Նրա այս խոսքն ինձ ծանոթ թվաց. երևի իմ կարդացած գրքերից էր առել, բայց համաձայնել դրան, կնշանակեր վերադառնալ իմ նախկին վարքին: Իսկ դա միայն անախորժություններ էր բերելու ինձ: Եվ ես առաջարկեցի «փոխզիջման» գնալ.

– Լսիր, արի այսպես անենք, ես կհրաժարվեմ մտքումս չարը դաժանորեն պատժելուց և չվաստակած շռայլ վայելքներից, իսկ դու մի՛ նկատիր իմ մանր-մունր շեղումները, բացերը, մոլորություններն ու զանցանքները...

– Չէ՛, կներես, հենց այդ «մանրուքներից» եմ ծնվում-բազմանում ամենամեծ արատները... Ես կարող եմ համաձայնել ուրիշ բանի. արա՛ ինչ լավ բան կարող ես անել...

– Իսկ դատավորն ով է... Ո՞վ պետք է որոշի, թե ես ինչ լավ բան կարող եմ անել և ինչքան:

– Ես՝ քո խիղճը...

– Լավ, քեզնից պրծում չկա՞, – խեղճացա ես, – մինչև ե՞րբ պիտի ինձ տանջես:

– Մինչև որ դադարես քեզ և ուրիշներին խաբել, սկսես մարդավարի ապրել: – Ասաց ու լռեց: Իսկ ես ընկա դառն խոհերի գիրկը. առհասարակ, ինչի՞ համար է մարդուս խիղճ տրվել: Որ բռնանա՞ քո վրա, չթողնի՞ ուզածդ անես կամ նույնիսկ մտածես: Իսկ այ, մյուս կենդանի արարածները կատարելապես ազատ են դրանից: Ավելի լավ չէ՞ր նրանց պես չիմանալ՝ ինչ է պարտք ու պարտականություն և որևէ մեկին հաշիվ չտալ արածիդ ու չարածիդ համար: Ի՞նչ է տալիս մեր միտքը, խելքը: Վերջապես՝ խիղճը: Դրանք բնության շնորհներն են, թե՞ պատուհաս մեր գլխին... Մինչև հիմա էլ ես չեմ գտնում այդ հարցերի ստույգ պատասխանները: Իսկ կինս ինձ նորանոր հանձնարարություններ է տալիս և պահանջում կատարել: Ինչքա՞ն եմ հայիոյել, թակել, քանի՞ անգամ եմ բաժանվել... Չի խարտվում... Ճիշտ է, այդ մասին գիտենք ես ու իմ խիղճը: Իսկ խիղճս առայժմ ինձ չի մատնում: Միայն թե չգիտեմ՝ ինչքան կարող է այսպես շարունակվել:

Չէ, հարևանս ինձ լավ խորհուրդ չտվեց: Յետո՞ հենց որ տեսա՝ թունդ հայիոյելու եմ... Մտքումս... Միայն թե չգիտեմ՝ նա՛ ինչպես կպատասխանի... իր մտքում...